Սոնա Հրաչինյան
ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետ, մագ. 1-ին կուրս
Գիտ. ղեկ.՝ ա. գ. դ., պրոֆ. Մ. Մանասյան

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սյուն աշխատանքի նպատակն է՝ տեսական վերլուծության միջոցով բացահայտել աշխարհում ապրող հայերի ազգային ինքնության պահպանման հայեցակարգային մոտեցումները և մշակել այնպիսի ռազմավարություն, որ կնպաստի և՛ Հայրենիքի, և՛ Սփյուռքի զարգացմանը: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում այն դինամիկ փոփոխվող երևույթ է, որը ունենում է իր աստիճանային զարգացումը կապված տարածաշրջանից:

Աշխարհում չկա մի ազգ, որը իր պատմության ընթացքում չունենա սև բծեր: Ցավոք մեր պատմության մեջ սև բծերը գերակշռել են: Յուրաքանչյուր ազգ գոյատևելու և բնականոն կյանքով ապրելու համար պետք է ունենա իր հայրենիքը: Հայրենիքը ժողովրդի պատմական ապրելատարածքն է: Սակայն ամեն ապրելատարածք դեռ հայրենիք չէ: Ապրելատարացքը ազգի համար հայրենիք է դառնում դարերի ընթացքում, երբ ստեղծում են ժողովրդի պատմա-մշակութային, ազգագրական, ճարտարապետական հուշարձաններ, երբ ձևավորում է ազգային բնավորության գծեր, ավանդույթներ և սովորույթներ, լեզվական առանձնահատկություններ և վերջապես ազգային ինքնագիտակցությունը, երբ այդ հողը ժողովրդի պատմական հիշողության մեջ է մնում: «Հող» հասկացողությունը վերածվում է «տուն», իսկ «տուն» հասկացողությունն էլ «Երկիր» ու «Հայրենիք» հասկացողությունների և մնում ցեղի արյան ու գենի մեջ՝ որպես նրա գոյատևման հիմնական պայման: Այդ է պատճառը, որ պայքարը հայրենիքի ու անկախ պետության համար վերածվում է գոյատևման, կենաց ու մահվան կռիվ[1]: Ցավալին այն է, որ տարբեր ժամանակաշրջաններում մենք ազգային ինքնության պահպանման խնդիրները միշտ ունեցել ենք և շարունակում ենք ունենալ: Համաշխարհային պատմության մեջ քիչ են եղել որոշ ազգերի նկատմամբ ձեռնարկված պլանավորված ոճրագործությունները: «Գենոցիդ» տերմինը առաջացել է հունարեն genos-ռասա կամ ցեղախումբ և լատիներեն, cide-սպանել բառերի համակցումը:

---

[1] **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 2-3:

Թուրքական կառավարության գլխավոր նպատակը Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բնաջնջումն էր և դրանով իսկ հայկական հարցի լուծումը: Հայերի նկատմամբ գործադրված մյուս բոլոր միջոցառումները կապված էին այդ հիմնական հարցի հետ: Այդ հարցը վերջնականապես լուծելու նպատակով թուրքական ոճրագործները որոշել էին ոչնչացնել արևմտահայությանը՝ Արևմտյան Հայաստանը տիրապետել առանց հայերի, աշխարհագրական քարտեզից լիովին ջնջել Հայաստան անունը: Ջարդերը հիմնականում տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանի կենտրոնական մասում, որտեղ հայաշատ են՝ Կարինը, Բիթլիսը, Մուշը, Սասունը, Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան, Մալաթիան Երզնկայում, Ամասիայում, Ակնում վերածվեցին կատարյալ սպանդանոցի: 1915 թ. հունիսին Խարբերդից առաջին քարավանը ուղարկվեց Դեյր էզ Զորի, Ռա ուլ Այնի, բայց մինչ Մալաթիա հասնելը բոլորը մահացան: Մոտավոր տվյալներով Մեծ եղեռնի զոհերի հավանական թիվը 1.5 մլն. է: 1915-1916 թթ. Երիտթուրքերի կառավարությունը սրի միջոցով արևմտահայերին մասսայաբար տեղահան արեց հայերի բնակավայրերից, կողոպտեց նրանց ունեցվածքը, ավերեց ու ամայացրեց ամբողջ Արևմտյան Հայաստանը: Թուրքիայի վեզիր, հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշան հայտարարում էր՝ «Երեք ամսում ես ավելի շատ բան արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Աբդուլ Համիդը 30 տարում»[1]: Արգելվեց «Հայաստան» բառի օգտագործումը, փոխարեն գործածվում էր «Քուրդիստան» կամ «Անատոլիա» անվանումներ: Չնայած այս ամենի թուրք ժողովուրդը մինչև այսօր էլ չի ընդունում իր կատարած ոճրագործությունը և գտնում է, որ ընդհակառակը հայերն են թուրքերին սպանել և տեղահան արել: Ցեղասպանությունը ևս մեկ պատճառ հանդիսացավ, որպեսզի հայկական գաղթավայրերը տարեցտարի ավելանան, աշխարհագրական քարտեզի վրա նշվի հետզհետե ավելացող Հայկական Սփյուռքի ընդլայնումը: Ընդհանրացնելով կարող ենք նշել՝ցեղասպանությունը Հայկական Սփյուռքի ձևավորման գլխավոր գործոնն է: Մազապուրծ եղած հայերը սփռվեցին աշխարհով մեկ, ինչպես զարգացած, այնպես էլ նոր զարգացող երկրներ:

Աշխարհի շատ երկրներում պատմականորեն ձևավորված հայ համայնքներն հին դարերում և Առաջին աշխարհամարտից հետո համալրվեցին Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ վայրերից տեղահանված գաղթականներով:

[1] **Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ. Ռ.**, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1979, էջ 370:

XX դարի 20-ական թվականներին հայոց մտածողության մեջ ստեղծվեց մի նոր բառանվանում «Սփյուռք» կամ «Ցրոնք», որի իմաստային տարբերակը այլ լեզուներում չկա: Սփյուռքը ազգի այն մասն է, որը ինչ-ինչ պատճառներով ապրում է պատմական հայրենիքից դուրս և փորձում է օտար ափերում ստեղծել և պահպանել ազգային արժեքները: Այդ ամենը կատարվում է ավանդույթների պահպանման, եկեղեցիների և դպրոցների կառուցման, պարի, երգերի, արվեստի զարգացման հետևանքով[1]: Հայերը աշխարհում կազմում են 10 մլն., որից 7 մլն. կազմում են սփյուռքահայերը, որոնք բնակվում են աշխարհի տարբեր մասերում: Կարելի է առանձնացնել սփյուռքի 2 տեսակ՝ Նոր և Հին: Հին կամ դասական սփյուռք է համարվում ցեղասպանությունից հետո արտագաղթածները, որոնք հաստատվել են հարակից և այլ տարածաշրջաններում: Հայապահպանության տեսանկյունից այս խմբի մեջ մտնող արտագաղթածները համեմատաբար ավելի պահպանողական են, սակայն նրանց խնդիրը հայերեն լեզվի իմացության աստիճանաբար անհետացումն է: Սփյուռքի Նոր ժամանակաշրջանը, որը բաժանվում է ենթաշրջանների՝ ռեսիդենտներ, որոնք հեռացան Հայաստանի խորհրդայնացումից հետո և 1990-ական թթ-ին տնտեսական իրավիճակից ելնելով:

1920 թվականներին հայերը բնակվել են Մերձավոր Արևելք (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս), ինչպես նաև Ֆրանսիա, ԱՄՆ, Հյուսիսային Կովկաս և այլն: Սփյուռքի գոյության առաջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում ապաստանած հայերը հետևում էին Հայկական հարցի միջազգային քննարկումները: Նրանք շարունակում էին դրական արդյունքի հույս ունենալ: Այդ սպասումները կապված էին Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտության, 1918 թ. ՀՀ-ի ստեղծման, 1920 թ. Սևրի հաշտության պայմանագրի հետ: Սակայն հայերի և սփյուռքահայերի հույսերը չարդարացան, քանի որ վերացավ ՀՀ-ն և երկրում հաստատվեց խորհրդային վարչակարգ: 1921 թ. փետրվար-մարտ Լոնդոնում կայացավ մեծ տերությունների կոնֆերանս, որին ներկա էին 2 պատվիրակություն: Ավետիս Ահարոնյանը ներկայացնում էր նախկին ՀՀ-ի կառավարությունը և Պողոս Նուբարը, որպես սփյուռքահայ շրջանների ներկայացուցիչ: Լոնդոնի կոնֆերանսում արտասահմանի հայկական երկու պատվիրակությունները հարց էին բարձրացրել՝ պահպանել և գործի վերածել Սևրի պայմանագրի որոշումները՝ Միացյալ և անկախ Հայաստան ստեղծելու մասին: Սփյուռքահայերի ամբողջ հույսը կապված էր այս պայմանագրի հետ: Միասնական

[1] **Գաբրիելյան Վ.**, Սփյուռքահայ գրականություն, Երևան, 1987, էջ 3-4:

Հայաստան ունենալու դեպքում Սփյուռքում ապրող հայերը մտադիր էին վերադառնալ իրենց հայրենիք: Նրանց հույսերը չիրականացան: Թուրքերի պնդմամբ և արևմտյան տերությունների պաշտպանությամբ կոնֆերանսը մերժեց հայերի պահանջները, բանաձև ընդունեց ոչինչ չասող ու չպարտավորեցնող հայկական ազգային օջախ ստեղծելու մասին: Այդ դեպքերից հետո տեղի ունեցավ Լոզանի կոնֆերանսը (1922 թ. նոյեմբեր, 1923 թ. հուլիս), որի որոշումներում անհետացավ նաև այն, ինչ ընդունվել էր Լոնդոնում: Լոզանի հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1923 թվականի հուլիսի 24-ին: Նման պայմաններում Սփյուռքի հիմնական խնդիրը դարձավ գաղթականների ինքնահաստատումը ապաստանած երկրներում և սփյուռքահայության նոր սերունդների մեջ ազգային ինքնագիտակցության ձևավորումը: Այս ամենը դիտվում էին որպես Հայ դատի լուծման ապագա պայքարի անհրաժեշտ նախադրյալներ: Աշխարհում սփռված հայությունը, կորցնելով իր հողն ու երկիրը, ստիպված էր հարմարվել նոր կյանքի պայմաններին: Այդ իսկ պատճառով տարբեր համայնքներում հայերը առաջին իսկ տարիներից ստեղծեցին զանազան կազմակերպություններ, որոնք միասնական ուժերով հիմնում են դպրոց ու հրատարակչություն, ակումբ ու միություն, լույս են ընծայում մամուլ ու գրականություն: Ստեղծում են բազմաթիվ հայ առաքելական եկեղեցիներ:

Սփյուռքում գոյություն ունեն մի քանի կուսակցություններ՝ Կոմունիստական, Ազգային, Ռամկավար-ազատական, Դաշնակցական: Նշյալ կուսակցությունների ազգապահպան ինքնորոշումը հստակ է, անկախ կուսակցությունների կողմնորոշումից նրանց գլխավոր նպատակը օտար երկրներում հայ ազգային դիմագծի պահպանումն է: Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը կազմավորվել է 1890-ին: ՀՅԴ ժողովը, հաշվի առնելով հայ բնակչության սփռվածությունը, կուսակցության կազմակերպական կառուցվածքում ընդգրկեց ապակենտրոնացման սկզբունքը: ՀՅԴ կարողացավ ընդլայնել իր ազդեցությունը և կարճ ժամանակամիջոցում դարձավ հայ քաղաքական կուսակցություններից առավել հեղինակավորը, քանի որ կուսակցության մասնաճյուղերը սփռված էին հայաշատ գրեթե բոլոր համայնքներում: Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության թերևս նպատակները հստակ էին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը, սակայն պառակտումներ սկսվեցին կուսակցության ներսում, որը խաթարեց ազգապահպան միջոցառումների կազմակերպմանը: Դեռ Լոզանի խորհրդաժողովը չավարտված՝ հայ ժողովրդի հետագա գոյապահպանության հարցը ունենում է Ռամկավար ազատական կուսակցության մտահոգիչ հարցերից մեկը: Հատկապես այս երեք կուսակցությունները մեծ ազդեցություն ունեն սփյուռքահայ

հասարակության համար, քանի որ հենց այս կուսակցություններն են կազմակերպում կառավարում բարելավում իրենց կյանքը: Այսօր էլ այս կուսակցությունները շարունակում են իրենց ակտիվ գործունեությունը, որի նպատակն է ակտիվացնել, պահպանել ազգային ինքնագիտակցությունը, զարգացնել Հայկական համայնքները և կարողանալ այդ մեծ ներուժ օգտագործել Հայաստանում ի շահ համայն հայության: Ինչպես սարսափելի էր ցեղասպանության երևույթը, այնպես էլ նրանից բխող հետևանքները ճակատագրական եղան: Օսմանյան կայսրությունում բնակչության զանգվածային կոտորածից բացի ոչնչացնում էին նաև հայկական քաղաքակրթության նյութական վկայությունները: Թուրքական կառավարությունը գիտակցելով եկեղեցու դերն ու նշանակությունը հայերի կյանքում, սպանեցին հայ հոգևորականներին և ոչնչացրեցին եկեղեցիներն ու վանքերը, բազմաթիվ արժեքավոր միջնադարյան ձեռագրեր, մատյաններ և այլն: Ազգային ինքնության պահպանման խնդիրը կար ոչ միայն գաղթավայրերում, այլև պատմական Հայաստանի տարածքում ևս: Սփյուռքում ազգային ինքնության պահպանման առանձնահատկությունները կայանում են նրանում, որ տարբեր տարածաշրջաններ, ունենալով իրենց ազգային յուրահատկությունները, կարողանում են տարբեր աստիճանի ազդեցություն ունենալ ներգաղթած ժողովրդի վրա: Օրինակ՝ Ասիական երկրներում կրոնական նկատառումներից ելնելով՝ ասիմիլացման երևույթը առավելապես դանդաղ է կատարվում, այդ ամենը մի կողմից դրական է այն առումով, որ պահպանվում է ազգային ինքնությունը, սակայն բացասականը է, քանի որ քաղաքական կյանքում նրանց ընդգրկվածությունը քիչ է: Սակայն Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով զիջում էին Եվրոպական երկրներին, հայ գաղթականները զգալի դեր են խաղացել առևտրի ու արհեստագործության մեջ: Գաղթած հայերը Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում հայ գաղթականները զուրկ էին տեղաբնիկներին տրված քաղաքական և սոցիալական իրավունքներից: Այդ երկրի արտադրության մեջ ներգրավվելը պահանջում էր համապատասխան մասնագիտական որակավորում, լեզվի իմացություն: Ներգաղթած հայերի ճնշող մեծամասնությունը երկրագործներ էին, արհեստավորներ և մանր առևտրականներ, որոնք չէին տիրապետում լեզվին: Պահանջվեց տասնյակ տարիներ, որպեսզի սփյուռքահայերի նոր սերունդը, որն մեծացել և կրթություն էր ստացել այդ երկրում, կարողանա ադապտացվել տվյալ երկրի պայմաններին:

1915-1920-ական թթ. մազապուրծ եղած սովյալ հայերի առաջին հանգրվանը եղավ Մերձավոր Արևելքի երկրներում: Մինչ երկրորդ

համաշխարհային պատերազմը սփյուռքահայերի ուսումնական հաստատությունները կենտրոնացած էին Մերձավոր Արևելքում և Իրանում: Լիբանանում 1920-1930-ական թթ. կային 40 հայկական դպրոցներ: Գործում էին տարրական, նախակրթական, միջնակարգ և բարձրագույն դպրոցներ: Բեյրութի նշանակալից դպրոցներից են եղել Հայ ավետարանական քոլեջը, Նշան Փալանջյանի ճեմարանը, Կենաց երկրորդական վարժարանը և 1955 թ-ին հիմնվեց Հայկազյան քոլեջը[1]:

19-20-րդ դարերում Սիրիայի և Լիբանանի հայ գաղութների զբաղմունքները արհեստներն էին, առևտուրը և գյուղատնտեսությունը:

1915 թ-ին Հալեպ քաղաքը լրիվ դատարկվեց հայերից: Ամռանն ու աշնանը Հալեպ հասան Կիլիկիայի ու արևելյան նահանգների ողջ մնացած հայությունը: Այս նույն թվականին ավելի քան 350.000 հայեր հանգրվանել էին Հալեպում, ուր որոշ ժամանակ մնալուց հետո քշվեցին անապատ: Դամասկոսից և Հալեպից աքսորյալներին տանում էին Սիրիական անապատին ավելի մոտ գտնվող վայրեր՝ Մեսքենե, Դեյր-էզ-Զոր, Ռաս-ուլ Այն, Ռակկա, Ջերաբլուս և այլն: Համաշխարհային պատերազմի ավարտին Սիրիայի տարբեր քաղաքներում մնացել էին 70-75 հազ. հայեր[2]: Մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը Սիրիայում հայկական դպրոցների թիվը կազմում էր 70-100: Հետագա տարիներին դպրոցների թիվը կրճատվեց, սակայն վարժարանները պահպանվեցին Հալեպում՝ Լազար Նաճարյան-Գալուստ Կուլպենկյան, Կիլիկյան, Կարեն Եպպե ճեմարանները, Մխիթարյան միջնակարգ դպրոցը և այլ նախակրթարաններ: Սփյուռքում գործող նշանավոր դպրոցներից են եղել Մելքոնյան կրթական հաստատությունը, որը հիմնվել է Կիպրոսում 1924 թ-ին, Մուրատ-Ռափայելյան վարժարանը՝ հիմնվել է Վենետիկում 1836 թ-ին: ԱՄՆ-ի հայկական համայնքը բնակչության թվով լինելով երկրորդը ՌԴ-ից հետո, նրանում բացվեցին մի շարք դպրոցներ և վարաժարաններ Լոս Անջելեսում, Սան Ֆրացիսկոյում, Բոստոնում և այլ քաղաքներում: Այստեղ առավել տարածում ունեն միօրյա դպրոցները: Նախկին Խորհրդային Միության տարածքում 1920-ական թթ. հայկական դպրոցները գործում էին Ռուսաստանի հատկապես Մոսկվայում, Աստրախանում, Կրասնոդարի երկրամասում, Ստավրոպոլի երկրամասում, Դոնի Ռոստովում: Նշանավոր էր Լազարյան ճեմարանը, որը դարձել էր արևելագիտության ու հայագիտության զարգացման կարևոր կենտրոն, 1921 թ-ից՝ Մոսկվայի հայ մշակույթի տուն: Չնայած Սփյուռքում գործող

[1] **Բարխուդարյան Վ.**, Հայոց պատմություն, Երևան, 2000, էջ 148:
[2] **Միքայելյան Վ.**, Հայ գաղթաշխարհի պատմություն, Երևան, 2003, էջ 337-338:

բազմաթիվ դպրոցների, այնուամենայնիվ գործող գլխավոր հիմնախնդիրը մնում է լեզվի պահպանումը: Դա նշանակում է, որ դեռ պետք է պայքարել այն բանի համար, որ յուրաքանչյուր համայնք այնպիսի զարգացում ունենալ, որ կարողանա կառավարել և կազմակերպել համայնքի պահանջները բավարարող կառույցներ: Այս կրթական կառույցների հիմնական գերնպատակն օտար երկրներում ազգային ինքնության և ազգային ինքնագիտակցության պահպանումն է: Կառուցվածքային էթնիկական ինքնապաշտպանա-կան ուղիներից են՝ կրոնը ու եկեղեցին, դպրոցը, մամուլը, լեզուն, գրականությունը, արվեստը, ինչու չէ նաև էթնոպաշտպան գաղափարները: Յուրաքանչյուր երկրում, որտեղ գոյություն ունեն հայկական համայնքներ, փորձ է արվում ստեղծել էթնոպաշտպան կառույցներ, որոնք կնպաստեն էթնիկական «ես»-կոնցեպցիայի պահպանմանը:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում հայ ազգային ինքնության պահպանման գործընթացը կատարվում է տարբեր ձևերով, այդ ամենի պատճառը հյուրընկալվող երկրի ավանդույթների ու սովորույթների, ինչպես նաև կրոնի և մի շարք այլ տարբերությունների ազդեցությունն է ներգաղթող էթնիկական խմբի վրա: Այսօր, ցավոք, Սփյուռքում, կրոնական տեսանկյունից համայնքները իրարից խիստ տարբերվում են: Հատկապես կարևոր է Հայ առաքելական եկեղեցու դերը, որի հետևորդն է սփյուռքահայերի գերակշիռ մասը:

Միածուլման զարգացման գործոնները անձի մակարդակով.



Հայ առաքելական եկեղեցին, սփյուռքի որոշ թեմեր, Հայ հեղափոխական դաշնակցությունը կուսակցության ազդեցությամբ դադարեցին ճանաչել Ս. Էջմիածնի վարչական գերագույն իշխանությունը և անցան Մեծ Տան Կիլիկիո (Անթիլիաս, Լիբանան) կաթողիկոսության ենթակայության տակ[1]: Հետևաբար այս պառակտումները բացասական հետևանքներ ունեցան սփյուռքահայության վրա: Հայ առաքելական եկեղեցու վերամիավորման անհրաժեշտություն կա: Սփյուռքահայ համայնքներում մեծ մասում գործում են նաև հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ: Օրինակ ԱՄՆ-ում առանձնացվում է Արևմտյան և Արևելյան թեմերը: Արևելյան թեմը կազմավորվել է 1927 թվականին, առաջնորդանիստը Նյու Յորքի Ս. Վարդան մայր տաճարն է, իսկ Արևմտյան թեմը նույնպես ձևավորվել է 1927 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հայրապետական կոնդակով: Առաջնորդանիստը Լոս Անջելեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Այս թեմի գործունեությունները

[1] Հայ Սփյուրք հանրագիտարան, Երևան 2003, էջ 13

ծավալվում են արևմտյան նահանգներում: Հայկական համայնքներում հին ժամանակներից սկսած լույս են տեսել բազմաթիվ պարբերականներ: Հայ հնագույն պարբերականը եղել է «Բազմավեպը» Վենետիկի հայ Մխիթարյան միաբանությունում 1843 թվականից: Ներկայիս հեղինակավոր հանդեսներից են ԱՄՆ-ում «Հայրենիքը», «Երիտասարդ Հայաստանը», «Ասպարեզը» և այլն: Սակայն այստեղ առկա են նույնպես խնդիրներ: Այսօր Սփյուռքում հրատարակվող մամուլների մեծամասնությունը հայալեզու չէ, հրատարակվում են այն լեզուներով որտեղ, որ գտնվում են: Մեծ է նաև Հայրենիք-Սփյուռք կապի արդյունքները դա կլինի տնտեսական, սոցիալական թե մշակութային: Ցանկացած համագործակցության արդյունքում շահում է երկու կողմն էլ: Այդպիսի մշակութային համագործակցություն էր Հայաստանի և ԱՄՆ-ի հայ համայնքում կազմակերպվող ազգագրական երգի-պարի ուսուցումը, որը կատարվում էր «Կարին» խմբի կողմից: Ցանկալի կլինի այդպիսի համագործակցությունները շարունակվեն քանի որ Սփյուռքը զգում է Հայրենիքի անմիջական աջակցության կարիքը:

Այսպիսով հանգեցինք այն եզրակացությանը, որ չնայած Սփյուռքը դիտում ենք մեկ միասնական ամբողջություն, սակայն յուրաքանչյուր տարածաշրջան կամա թե ակամա ազդում է հայ ազգային խմբի մտածողության վրա և ինչ-որ չափով միաձուլվում է գերակշռող էթնոխմբին:

Грачинян Сона

АНАЛИЗ ГЕОГРАФИЧЕСЛИХ ОСОБЕННОСТЕЙ СОХРАНЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ НЕЗАБИСИМОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Цель этой работы в том, чтобы с помощью теоретического анализа обнаружить умозрительный подход в вопросе сохранения национальной независимости армян, живущих в мире, и разработать такую смратегию, которая будем способствовать развитию отечества и диаспоры. Вмире нет такой нации, которая не имела бы чёрных пятен на всей своей истории. К сожалению, эти пятня преобладали и в нашей истории, поэтоьу проблема сохранения национальной независимости всегда существовала и продалжает существоват.

Геноцид оставил негативные послествия. До геноцида уже существовали колония, которые восполились армянами, спасшимися от геноцда. Так сформировалась армянская диаспора.

Численность армян в мире составляет 10 мил., из них 7 мил. Диаспора. В любой стране, где есть армянские общины, делаются попытки создания этнозащитное структуры, которая способствует сохранению концепции-Я. В различных регионах этом працесс происходит по-разному.

Sona Hrachinyan

THE ANALYSIS OF THE PROTECTION OF THE GEOGRAPHICAL FEATURES OF THE NATIONAL IDENTITY IN DIASPORA

The purpose of this work is to reveale the protection of conceptual approaches of the Armenian national identity living in the world and to organize such a strategy that will contribute to the development of the Diaspora and the homeland. There is no any nation in the world that during its history doesn't have 'black spots'. The genocide left very negative consequences. Before the genocide, there were communities in the world, which was supplemented by Armenians, survived of the genocide and the Armenian Diaspora was formed in that way.

The number of Armenians in the world is counted to 10 million and 7 million in Diaspora. In Diaspora the ways of structural ethnic defense are the following- religion and church, school, media, literature, art, language, and why not ethno-protectoral ideas. In different regions the process of the Armenian national identity's protection is done in different ways. The reason of that are the traditions and habits of the host country as well as the influence of religion and a number of other differences on the immigrant ethnic group. The whole course of The Armenian history shows that no country in the world has stand beside the Armenians in any good periods. From here we can make a conclusion that all orientations were in vain. And why to choose any other state if in the different countries of the world existed our ‚Armenian diasporaŠ only it had to be gathered.